



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Առողջապահության
Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia

AUA American University
of Armenia

ԹՐՓԱՆՃԵԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ



Առողջության առաջնային պահպանման
օղակի բժիշկների վերաբերմունքը և
գործելակերպը Քովիդ-19-ի վերահսկման և
վարման վերաբերյալ

Համառոտ զեկուլյց

Դեկտեմբեր 2021

Թրփանճեան Հանրային առողջապահության ֆակուլտետ

Ավետիսեան Օնանեան առողջապահական ծառայությունների
հետազոտման և զարգացման կենտրոն

Հայաստանի ամերիկյան համալսարան

*Այս հետազոտությունն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման
գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) առատաձեռն աջակցության շնորհիվ: Այս
հետազոտության բովանդակությունը Հայաստանի ամերիկյան համալսարան
հիմնադրամի պատասխանատվության տակ է, և անպայմանորեն չի արտացոլում
ԱՄՆ ՄԶԳ կամ Միացյալ Նահանգների կառավարության հայացքները:*

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանում թերապևտների և ընտանեկան բժիշկների շրջանում իրականացված հեռախոսային հարցումները ֆինանսավորվել են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից և իրականացվել են Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամի կողմից՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ սերտ համագործակցությամբ: Հարցումն իրականացվել է 2021 թվականի հունիսից սեպտեմբեր ամիսներին: Հետազոտության *նպատակն* էր քանակական մեթոդաբանության միջոցով ուսումնասիրել առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) բուժաշխատողների վերաբերմունքը և գործելակերպը Քովիդ-19-ի վերահսկման և վարման վերաբերյալ, ինչպես նաև գնահատել առկա Քովիդ-19 ուղեցույցերին ԱԱՊ բուժաշխատողների գործելակերպի հետևողականությունը: Ընտրանքը և տվյալների հավաքագրումն իրականացվել է ակադեմիկոս ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի (ԱԱԻ) հետ համատեղ:

Զեկույցում հետազոտության ընթացքում ուսումնասիրված և հայտնաբերված արդյունքները ամփոփ կերպով ներկայացված են հետևյալ բաժիններով՝ մասնակիցների սոցյալ-ժողովրդագրական բնութագրերը, Քովիդ-19-ի վերաբերյալ վերապատրաստումները/դասընթացները, Քովիդ-19-ի նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը, Քովիդ-19-ի վերահսկման և դեպքերի վարման գործելակերպը, Քովիդ-19 վարակի կանխարգելման և վերահսկման գործելակերպը, և ԱԱՊ բուժաշխատողների Քովիդ-19-ի դեմ պատվաստման կարգավիճակը, վերաբերմունքը և պատրաստակամությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թիրախային բնակչությունը առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) բժիշկներն էին, ովքեր ներգրավված էին Հայաստանում Քովիդ-19 պացիենտների բուժման մեջ: Հետազոտական թիմը որպես ընտրանքի շրջանակ օգտագործել է ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան

Առողջապահության ազգային ինստիտուտին (ԱԱԻ) պատկանող բոլոր ԱԱՊ բուժաշխատողների ցանկը: Թերապևտների և ընտանեկան բժիշկների այս ցանկը ստեղծվել է ԱԱԻ-ի կողմից Հայաստանում նրանց շարունակական բժշկական կրթության միջոցառումների կազմակերպման նպատակով: ԱԱԻ ցանկից հետազոտության հնարավոր մասնակիցներին ընտրելու համար օգտագործվել է պարզ պատահական ընտրանքի տեխնիկան: Նախատեսված ընտրանքը կազմում էր 384 անձ: Կանխատեսելով հետազոտությանը մասնակցելու 60,0% արձագանք՝ հետազոտական թիվը տրամադրված ցանկից պատահականության սկզբունքով ընտրել է 640 հնարավոր մասնակից: Մասնակիցների պատահական ընտրությունից հետո ԱԱԻ-ն կապ է հաստատել 519 բուժաշխատողների հետ, որպեսզի ստուգի նրանց համապատասխանությունը հետազոտության ընդգրկման չափանիշներին, ձեռք բերի նրանց համաձայնությունը կոնտակտային տվյալները հարցազրուցավարներին փոխանցելու և հարցման համար նախընտրելի ժամանակը: Հետազոտության մասնակիցների ընտրության ընդգրկման չափանիշներն էին հայերենի իմացությունը և առնվազն մեկ ամիս Քովիդ-19-ի ամբուլատոր վարման մեջ ներգրավվածությունը: Այնուհետև, ԱԱԻ-ը նախնական համաձայնություն տված հավանական մասնակիցների ցանկը տրամադրել է հետազոտական թիմին, որից հետո հարցազրուցավարները հեռախոսով կապ են հաստատել և իրականացրել հարցումը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ընդհանուր առմամբ հետազոտությանը մասնակցեցին 355 ԱԱՊ բուժաշխատողներ: Մերժման տոկոսը կազմեց 24,9% (n=129): Մերժումների հիմնական պատճառը ժամանակի սղությունն էր և բուժաշխատողների զբաղվածությունը: Մասնակիցների մեծամասնությունը կանայք էին (91,6%), միջին տարիքը՝ 56,3, և միջինում 24,7 տարվա աշխատանքային փորձով (Աղյուսակ 1):

Տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ հարցմանը մասնակցած բժիշկների 40,6%-ը հետևողական էր առաջին շարքի հակաբիոտիկների նշանակման գործելակարգին, ինչը նշանակում է, որ իրենց առաջին ընտրության

հակաբիոտիկը ամոքսիցիլինն էր՝ ազգային ուղեցույցներին համապատասխան, իսկ հարցվածների 59,4%-ը հետևողական չէր նույն գործելակարգին:

Քովիդ-19-ի վերաբերյալ վերապատրաստումները/դասընթացները

Մասնակիցների մեծամասնությունը նշեցին, որ համաճարակից ի վեր մասնակցել են վարակի վերահսկման և կանխարգելման (ՎՎԿ) (95,7%), Քովիդ-19-ի պատվաստման (95,5%), Քովիդ-19-դրական պացիենտների ամբուլատոր վարման (95,8%) և անհատական պաշտպանական միջոցների (ԱՊՄ) ճիշտ օգտագործման (58,8%) վերաբերյալ վերապատրաստման դասընթացների

(Աղյուսակ 2):

Այն մասնակիցները, որոնք հետևողական էին առաջին շաբթի հակաբիոտիկների նշանակման գործելակարգին, հաղորդել էին Քովիդ-19 դրական պացիենտների ամբուլատոր վարման վերաբերյալ վերապատրաստման դասընթացների մասնակցության վիճակագրորեն հավաստի ավելի բարձր մասնաբաժին՝ համեմատած ոչ հետևողական բժիշկների հետ (98,6% ընդդեմ 93,8%, $p=0,028$, համապատասխանաբար):

Քովիդ-19-ի նկատմամբ վերաբերմունքը

Մասնակիցների մեծամասնությունը (Աղյուսակ 3) ճիշտ վերաբերմունք ուներ Քովիդ-19-ի հետ կապված պնդումների նկատմամբ: Օրինակ՝ Քովիդ-19-ի նկատմամբ ընկալունակությունը չի կարող նվազել սննդային հավելումներ և վիտամիններ ընդունելուց (օրինակ՝ վիտամին C, D, Zn) (68,5%); Քովիդ-19-ից առաջացած բարդությունները (օրինակ՝ հոսպիտալացման անհրաժեշտությունը, թոքաբորբը) չի կարելի կանխել հակաբիոտիկների օգտագործմամբ (67,1%); անախտանիշ Քովիդ-19 ունեցող մարդիկ կարող են փոխանցել վիրուսը այլ մարդկանց (92,7%); սիմպտոմատիկ/ախտանշանային բուժումը, որը ներառում է հակապիրետիկ (ջերմիջեցնող և ցավը մեղմացնող) դեղամիջոցները, բավարար սնունդը և հեղուկները բավարար են Քովիդ-19 թեթև ձևերի բուժման համար (95,4%): Մասնակիցների ճնշող մեծամասնությունը համաձայն կամ լիովին համաձայն էր, որ Հայաստանում առողջապահական համակարգն ունի բոլոր անհրաժեշտ կարողությունները Քովիդ-19 համաճարակային իրավիճակը

վերահսկելու համար (86,1%) և ՀՀ կառավարության կողմից իրականացվող միջոցառումները բավարար են Քովիդ-19 համաճարակային իրավիճակը վերահսկելու համար (83,9%):

Քովիդ-19 վարակի վերահսկման և կանխարգելման (ՎՎԿ) նկատմամբ վերաբերմունքը

Նմանապես, հիմնականում Քովիդ-19-ի ՎՎԿ միջոցառումների նկատմամբ դիտվել է ճիշտ վերաբերմունք: Մեծամասամբ կարծում էին, որ անձնական օգտագործման բժշկական խալաթը տուն տանելը վտանգավոր է (67,3%), դիմակ կրելը կանխարգելում է վարակի տարածումը (96,0%), անհատական պաշտպանիչ միջոցները (խալաթ, վիրաբուժական/ շնչառական դիմակ, ձեռնոցներ, պաշտպանիչ ակնոցներ/ վահան) բուժաշխատողներին Քովիդ-19-ից պաշտպանելու արդյունավետ միջոցներ են (93,2%): Մասնակիցների ճնշող մեծամասնությունը վստահ էին, որ աշխատավայրում օգտագործում են համապատասխան/որակյալ անհատական պաշտպանիչ միջոցներ, որոնք պաշտպանում են Քովիդ-19-ով վարակվելուց (92,0%), և որ պատշաճ կերպով տեղեկացվել են Քովիդ-19-ից ինքնապաշտպանության համար անհրաժեշտ գործողությունների և գործիքների մասին (99,4%) և համապատասխան վերապատրաստում են անցել անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման վերաբերյալ (91,8%):

Քովիդ-19-ի վերահսկման և դեպքերի վարման գործելակերպը

Մասնակիցների մեծամասնությունը նշել է, որ Քովիդ-19-ով պացիենտների բուժման ժամանակ իրենք առաջնորդվում են հիմնականում Հայաստանի ազգային ուղեցույցներով և ընթացակարգերով (91,0%) և սեփական կլինիկական փորձով (72,1%) (**Աղյուսակ 4**): *Քովիդ-19 թեթև/մեղմ արտահայտված ախտանշաններով հիվանդներին* տնային խնամքի ժամանակ բժիշկների կողմից ամենահաճախ նշանակվող դեղամիջոցները ջերմիջեցնողներն էին (89,3%), վիտամին C-ն (81,1%) և վիտամին D-ն (80,3%): Բոլոր մասնակիցներն իրականացնում էին իրենց *Քովիդ-19 պացիենտների վիճակի վերահսկողություն*. ամենահաճախ նշվող

վերահսկողության ձևերն էին հեռախոսազանգերը (97,2%) և տնային այցերը (76,3%):

Ընդհանուր առմամբ, մասնակիցների կողմից իրենց հիվանդներին *հակաբիոտիկներ նշանակելու հիմնական պատճառը* եղել է կասկածվող բակտերիալ թոքաբորբի բուժումը (75,5%): Սակայն, առաջին ընտրության հակաբիոտիկների նշանակման գործելակերպին ոչ հետևողական բժիշկների մոտ 53,1%-ը նշել են, որ ռադիոլոգիական հետազոտությամբ հաստատված ցանկացած տիպի թոքաբորբի բուժման համար նշանակում են հակաբիոտիկներ: Որոշ մասնակիցներ նշել են նաև հակաբիոտիկների նշանակում թոքաբորբի կանխարգելման (8,5%) և բոլոր հաստատված Քովիդ-19 պացիենտների վարման նպատակով (2,3%):

Ըստ մասնակիցների՝ *առաջին ընտրության հակաբիոտիկների եռյակում* էին ամոքսիցիլինը (40,6%), ազիթրոմիցինը (30,1%) և ցեֆտրիաքսոնը (16,3%):

Մասնակիցներից շատերը նշել են, որ չեն նշանակում համակցված հակաբիոտիկային բուժում: Համակցված հակաբիոտիկային բուժման նշանակման ամենատարածված պատճառը պացիենտների շրջանում ուղեկցող հիվանդությունների առկայությունն էր (24,3%): Ամենահաճախ նշանակվող համակցված հակաբիոտիկային բուժումներն ընդգրկում էին ամոքսիցիլին/կլավուլոնաթթուն ազիթրոմիցինի հետ և ազիթրոմիցինը ցեֆտրիաքսոնի հետ (ըստ Նախարարի No 1856-Ա հրամանի «Արտահիվանդանոցային թոքաբորբերի վարման կլինիկական ուղեցույցը հաստատելու մասին» առաջարկվող համակցված հակաբիոտիկային բուժումն է ամոքսիցիլին/կլավուլոնաթթուն ազիթրոմիցինի կամ դոքսիցիլինի հետ):

Մասնակիցների մեծամասնությունն իրենց ամբուլատոր Քովիդ-19 պացիենտներին նշանակում են *կորտիկոստերոիդներ* (60,9%) և *հակակոագուլյանտներ* (89,6%), չնայած, որ դրանք խորհուրդ չեն տրվում Նախարարի No 1606-Ա հրամանով («Արտահիվանդանոցային պայմաններում կորոնավիրուսային հիվանդությամբ պացիենտների բժշկական օգնության ել սպասարկման կազմակերպման կարգը հաստատելու մասին»): Համեմատած

հակաբիոտիկների նշանակման գործելակարգին հետևողական բժիշկների՝ զգալիորեն ավելի շատ ոչ հետևողական բժիշկներ են նշել կորտիկոստերոիդների և հակամակարդիչների նշանակման մասին (53,9% ընդդեմ 65,7%, $p=0,025$ և 85,4% ընդդեմ 92,4%, $p=0,034$, համապատասխանաբար):

Քովիդ-19 ՎՎԿ գործելակերպը

Քովիդ-19 պացիենտի հետ շփվելիս թերապևտները և ընտանեկան բժիշկները ամենից հաճախ օգտագործում էին վիրաբուժական դիմակներ (95,2%), խալաթ (58,5%), ակնոցներ (57,6%) և ձեռնոցներ (53,1%) (**Աղյուսակ 5**): Ըստ մասնակիցների մեկ երրորդի (27,8%) պացիենտի հիվանդության կլինիկական պատկերը և հիվանդության պատմությունը ազդում են անհատական պաշտպանիչ միջոցներ ընտրելու իրենց որոշման վրա: Մեծամասնությունը (96,1%) նշեց, որ միշտ հետևում են ձեռքերի հիգիենային Քովիդ-19 հիվանդներին զննելուց առաջ և հետո և հնարավորության դեպքում ամենաքիչը 1 մ հեռավորություն են պահպանում պացիենտների (74,3%) և այլ բուժաշխատողների (75,4%) հետ շփվելիս :

Քովիդ-19 պատվաստման կարգավիճակը, վերաբերմունքը և պատրաստակամությունը

Մասնակիցների կեսից ավելին (57,8%) նշեց, որ առաջիկա մեկ տարվա ընթացքում Քովիդ-19-ով վարակվելու ռիսկ չունեն (**Աղյուսակ 6**) և նրանց 57,4%-ն ասաց, որ դրա հիմնական պատճառը Քովիդ-19-ի դեմ պատվաստված լինելն է: Ընդհանուր առմամբ, հետազոտության մասնակիցների 65,4%-ը ասել է, որ պատվաստվել է Քովիդ-19-ի դեմ, որոնցից 62,9%-ը լիովին պատվաստված էր (հետազոտության բոլոր մասնակիցների 41,2%-ը, $n=146$): Ի համեմատ ոչ հետևողական խմբի՝ հետևողական խմբում ավելի շատ մասնակիցներ էին պատվաստված (74,3% ընդդեմ 59,2%, $p=0,003$): Բուժաշխատողների շրջանում ամենատարածված պատվաստանյութը AstraZeneca-ն էր (46,5%), որին հետևում էր Sputnik V-ն (33,6%): Ընդհանուր առմամբ, մասնակիցների վերաբերմունքը Քովիդ-19-ի դեմ պատվաստումների նկատմամբ դրական էր: Այնուամենայնիվ, մասնակիցների կեսից ավելին համաձայն (50,0%) կամ լիովին համաձայն էր

(3,8%), որ Թովիդ-19-ի դեմ պատվաստանյութը թողարկվեց արագ՝ առանց համապատասխան փորձարկումների: Նրանցից շատերը (42,0%) մտահոգված էին արտակարգ իրավիճակում, համաճարակի ընթացքում մշակված պատվաստանյութի անվտանգությամբ: ԱԱՊ բուժաշխատողների ճնշող մեծամասնությունը (98,0%) պնդում էր, որ խորհուրդ կտան իրենց պացիենտներին պատվաստվել Թովիդ-19-ի դեմ:

ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ

| <p>Աղյուսակ 1. Հարցման մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական տվյալները</p> <p><i>Ներկայացված է ընդհանուր և ըստ առաջին ընտրության հակաբիոտիկների նշանակման գործելակերպին հետևողական և ոչ հետևողական բժիշկների խմբերի</i></p> | | | | |
|--|---------------|----------------|----------------|--------------|
| Փոփոխականներ | Ընդհանուր | Հետևողական | Ոչ հետևողական | p-value |
| | N=355 (100%) | N=144 (40.56%) | N=211 (59.44%) | |
| Սեռ, N (%) | | | | |
| Իգական | 325 (91,55) | 135 (93,75) | 190 (90,05) | 0,218 |
| Տարիք, տարեկան M (SD) | 56,29 (11,19) | 55,53 (10,32) | 56,80 (11,74) | 0,298 |
| Քովիդ-19-ի բուժման մեջ ընդգրկվածության ամիսների թիվը, M (SD) | 15,52 (2,32) | 15,68 (2,15) | 15,41 (2,43) | 0,285 |
| Որպես թերապևտ/ընտանեկան բժիշկ աշխատանքային փորձի տարիները, M (SD) | 24,67 (13,45) | 22,80 (12,38) | 25,95 (14,02) | 0,030 |

| <p>Աղյուսակ 2. Քովիդ-19-ի վերաբերյալ վերապատրաստումներ/դասընթացներ</p> <p><i>ներկայացված է ընդհանուր և ըստ առաջին ընտրության հակաբիոտիկների նշանակման գործելակերպին հետևողական և ոչ հետևողական բժիշկների խմբերի</i></p> | | | | |
|---|--------------|----------------|----------------|---------|
| Փոփոխականներ | Ընդհանուր | Հետևողական | Ոչ հետևողական | p-value |
| | N=355 (100%) | N=144 (40.56%) | N=211 (59.44%) | |
| Վարակի վերահսկում և կանխարգելում (ՎՎԿ), N (%) | 337 (95,74) | 139 (97,20) | 198 (94,74) | 0,261 |

| | | | | |
|---|-------------|-------------|-------------|--------------|
| Անհատական պաշտպանության միջոցների ճիշտ օգտագործում, N (%) | 207 (58,81) | 91 (63,64) | 116 (55,50) | 0,128 |
| Քովիդ-19-դրական պացիենտների տնային պայմաններում վարում, N (%) | 338 (95,75) | 141 (98,60) | 197 (93,81) | 0,028 |
| Քովիդ-19-ի թեստավորումը (պոլիմերազ շղթայական ռեակցիա), N (%) | 119 (34,00) | 49 (34,51) | 70 (33,65) | 0,869 |
| Քովիդ -19-ի դեմ պատվաստանյութերի մասին, N (%) | 336 (95,45) | 137 (96,48) | 199 (94,76) | 0,448 |
| Այլ դասընթացներ, N (%) | 110 (33,95) | 48 (37,21) | 62 (31,79) | 0,314 |

| Աղյուսակ 3. Քովիդ-19-ի նկատմամբ վերաբերմունքը | | | | |
|--|---------------------|-----------------------|-----------------------|----------------|
| <i>Ներկայացված է ընդհանուր և ըստ առաջին ընտրության հակաբիոտիկների նշանակման գործելակերպին հետևողական և ոչ հետևողական բժիշկների խմբերի</i> | | | | |
| Փոփոխականներ | Ընդհանուր | Հետևողական | Ոչ հետևողական | |
| | N=355 (100%) | N=144 (40.56%) | N=211 (59.44%) | p-value |
| Քովիդ-19-ի նկատմամբ ընկալունակությունը կարող է նվազել սննդային հավելումներ և վիտամիններ ընդունելուց (օրինակ՝ վիտամին C, D, Zn) , N (%) | | | | 0,805 |
| Լիովին համաձայն եմ | 4 (1,15) | 1 (0,71) | 3 (1,44) | |
| Համաձայն եմ | 106 (30,37) | 45 (31,91) | 61 (29,33) | |
| Համաձայն չեմ | 231 (66,19) | 91 (64,54) | 140 (67,31) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 8 (2,29) | 4 (2,84) | 4 (1,92) | |
| Քովիդ-19-ից առաջացած բարդությունները (օրինակ՝ հոսպիտալացման անհրաժեշտությունը, թոքաբորբը) կարելի է կանխել հակաբիոտիկների օգտագործմամբ, N (%) | | | | 0,057 |

| | | | | |
|---|-------------|-------------|-------------|-------|
| Լիովին համաձայն եմ | 9 (2,55) | 2 (1,40) | 7 (3,33) | |
| Համաձայն եմ | 107 (30,31) | 36 (25,17) | 71 (33,81) | |
| Համաձայն չեմ | 218 (61,76) | 100 (69,93) | 118 (56,19) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 19 (5,38) | 5 (3,50) | 14 (6,67) | |
| Քովիդ-19-ի թեթև ծանրության ընթացքով պացիենտների համար հոսպիտալացում չի պահանջվում, N (%) | | | | 0,386 |
| Լիովին համաձայն եմ | 40 (11,33) | 19 (13,19) | 21 (10,05) | |
| Համաձայն եմ | 294 (83,29) | 120 (83,33) | 174 (83,25) | |
| Համաձայն չեմ | 17 (4,82) | 5 (3,47) | 12 (5,74) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 2 (0,57) | 0 (0,00) | 2 (0,96) | |
| Քովիդ-19 վիրուսի տարածումը կանխելու նպատակով բոլոր կասկածելի կամ հաստատված դեպքերը պետք է մեկուսացվեն, N (%) | | | | 0,240 |
| Լիովին համաձայն եմ | 50 (14,16) | 16 (11,11) | 34 (16,27) | |
| Համաձայն եմ | 274 (77,62) | 113 (78,47) | 161 (77,03) | |
| Համաձայն չեմ | 28 (7,93) | 15 (10,42) | 13 (6,22) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 1 (0,28) | 0 (0,00) | 1 (0,48) | |
| Անախտանիշ Քովիդ-19 ունեցող մարդիկ չեն կարող փոխանցել վիրուսը այլ մարդկանց, N (%) | | | | 0,234 |
| Լիովին համաձայն եմ | 8 (2,27) | 2 (1,39) | 6 (2,88) | |
| Համաձայն եմ | 16 (4,55) | 4 (2,78) | 12 (5,77) | |
| Համաձայն չեմ | 304 (86,36) | 125 (86,81) | 179 (86,06) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 24 (6,82) | 13 (9,03) | 11 (5,29) | |
| Միմպտոմատիկ/ախտանշանային բուժումը, որը ներառում է հակապիրետիկ (ջերմիջեցնող և ցավը մեղմացնող) դեղամիջոցներ, բավարար սնունդ և | | | | 0,135 |

| | | | | |
|---|-------------|-------------|-------------|--------------|
| հեղուկներ, բավարար են Քովիդ-19 թեթև ձևերի բուժման համար, N (%) | | | | |
| Լիովին համաձայն եմ | 22 (6,29) | 11 (7,75) | 11 (5,29) | |
| Համաձայն եմ | 312 (89,14) | 128 (90,14) | 184 (88,46) | |
| Համաձայն չեմ | 16 (4,57) | 3 (2,11) | 13 (6,25) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Դիմակ կրելը՝ Քովիդ-19-ի տարածման կանխարգելման եղանակներից մեկն է, N (%) | | | | 0,713 |
| Լիովին համաձայն եմ | 42 (12,00) | 17 (11,89) | 25 (12,08) | |
| Համաձայն եմ | 294 (84,00) | 122 (85,31) | 172 (83,09) | |
| Համաձայն չեմ | 12 (3,43) | 3 (2,10) | 9 (4,35) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 2 (0,57) | 1 (0,70) | 1 (0,48) | |
| Ծխողներն ավելի քիչ հավանական է, որ կհիվանդանան Քովիդ-19-ով, քան չծխողները, N (%) | | | | 0,119 |
| Լիովին համաձայն եմ | 2 (0,63) | 2 (1,55) | 0 (0,00) | |
| Համաձայն եմ | 73 (22,81) | 24 (18,60) | 49 (25,65) | |
| Համաձայն չեմ | 228 (71,25) | 94 (72,87) | 134 (70,16) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 17 (5,31) | 9 (6,98) | 8 (4,19) | |
| Քովիդ-19 վարակը հիմնականում տարածվում է օդի միջոցով, N (%) | | | | 0,177 |
| Լիովին համաձայն եմ | 35 (9,94) | 16 (11,19) | 19 (9,09) | |
| Համաձայն եմ | 274 (77,84) | 115 (80,42) | 159 (76,08) | |
| Համաձայն չեմ | 43 (12,22) | 12 (8,39) | 31 (14,83) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Անհատական պաշտպանիչ միջոցները (խալաթ, վիրաբուժական/ շնչառական դիմակ, ձեռնոցներ, պաշտպանիչ ակնոցներ/ վահան) համարվում են | | | | 0,034 |

| | | | | |
|---|-------------|-------------|-------------|--------------|
| բուժաշխատողներին Քովիդ-19-ից պաշտպանելու արդյունավետ միջոցներ, N (%) | | | | |
| Լիովին համաձայն եմ | 33 (9,35) | 16 (11,11) | 17 (8,13) | |
| Համաձայն եմ | 296 (83,85) | 124 (86,11) | 172 (82,30) | |
| Համաձայն չեմ | 24 (6,80) | 4 (2,78) | 20 (9,57) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Բոլոր ախտահանիչ միջոցները արդյունավետ են Քովիդ-19 վիրուսը վերացնելու համար, N (%) | | | | 0,218 |
| Լիովին համաձայն եմ | 17 (4,84) | 10 (6,99) | 7 (3,37) | |
| Համաձայն եմ | 236 (67,24) | 99 (69,23) | 137 (65,87) | |
| Համաձայն չեմ | 97 (27,64) | 34 (23,78) | 63 (30,29) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 1 (0,28) | 0 (0,00) | 1 (0,48) | |
| Ձեռքերը ջրով և օձառով լվանալը նվազեցնում է Քովիդ-19-ով վարակվելու ռիսկը, N (%) | | | | 0,358 |
| Լիովին համաձայն եմ | 39 (11,08) | 20 (13,89) | 19 (9,13) | |
| Համաձայն եմ | 307 (87,22) | 122 (84,72) | 185 (88,94) | |
| Համաձայն չեմ | 6 (1,70) | 2 (1,39) | 4 (1,92) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Քովիդ-19 վարակի փոխանցումը հնարավոր է կանխել՝ ձեռքերը պարբերաբար մշակելով՝ ալկոհոլ պարունակող ախտահանիչ լուծույթներով՝ օձառի բացակայության դեպքում, N (%) | | | | 0,041 |
| Լիովին համաձայն եմ | 24 (6,82) | 15 (10,42) | 9 (4,33) | |
| Համաձայն եմ | 302 (85,80) | 123 (85,42) | 179 (86,06) | |
| Համաձայն չեմ | 25 (7,10) | 6 (4,17) | 19 (9,13) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 1 (0,28) | 0 (0,00) | 1 (0,48) | |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|-------|
| Ես կարծում եմ, որ իմ անձնական օգտագործման բժշկական խալաթը տուն տանելը վտանգավոր չէ, N (%) | | | | 0,229 |
| Լիովին համաձայն եմ | 9 (2,60) | 5 (3,55) | 4 (1,95) | |
| Համաձայն եմ | 104 (30,06) | 45 (31,91) | 59 (28,78) | |
| Համաձայն չեմ | 224 (64,74) | 85 (60,28) | 139 (67,80) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 9 (2,60) | 6 (4,26) | 3 (1,46) | |
| Ես վստահ եմ, որ աշխատավայրում օգտագործում եմ համապատասխան/որակյալ անհատական պաշտպանիչ միջոցներ, որոնք պաշտպանում են ինձ Քովիդ-19-ով վարակվելուց, N (%) | | | | 0,075 |
| Լիովին համաձայն եմ | 22 (6,27) | 11 (7,75) | 11 (5,26) | |
| Համաձայն եմ | 301 (85,75) | 125 (88,03) | 176 (84,21) | |
| Համաձայն չեմ | 28 (7,98) | 6 (4,23) | 22 (10,53) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Ես պատշաճ կերպով տեղեկացվել եմ Քովիդ-19-ից ինքնապաշտպանության համար անհրաժեշտ գործողությունների և գործիքների մասին, N (%) | | | | 0,470 |
| Լիովին համաձայն եմ | 39 (11,08) | 17 (11,89) | 22 (10,53) | |
| Համաձայն եմ | 311 (88,35) | 126 (88,11) | 185 (88,52) | |
| Համաձայն չեմ | 2 (0,57) | 0 (0,00) | 2 (0,96) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Ես համապատասխան վերապատրաստում եմ անցել անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման վերաբերյալ, N (%) | | | | 0,300 |
| Լիովին համաձայն եմ | 43 (12,22) | 19 (13,19) | 24 (11,54) | |
| Համաձայն եմ | 280 (79,55) | 117 (81,25) | 163 (78,37) | |
| Համաձայն չեմ | 29 (8,24) | 8 (5,56) | 21 (10,10) | |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|-------|
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Ես միշտ գիտեմ, թե ում կարող եմ դիմել Քովիդ-19 պացիենտի վարման վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում, N (%) | | | | 0,285 |
| Լիովին համաձայն եմ | 24 (6,92) | 12 (8,51) | 12 (5,83) | |
| Համաձայն եմ | 301 (86,74) | 123 (87,23) | 178 (86,41) | |
| Համաձայն չեմ | 22 (6,34) | 6 (4,26) | 16 (7,77) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Ես վստահ եմ, որ ունեմ բավարար գիտելիքներ Քովիդ-19 պացիենտների վարման և բուժման վերաբերյալ, N (%) | | | | 0,203 |
| Լիովին համաձայն եմ | 32 (9,25) | 16 (11,27) | 16 (7,84) | |
| Համաձայն եմ | 291 (84,10) | 120 (84,51) | 171 (83,82) | |
| Համաձայն չեմ | 23 (6,65) | 6 (4,23) | 17 (8,33) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Հայաստանում հանրություն բավարար չափով տեղեկացված է Քովիդ-19-ի վերաբերյալ, N (%) | | | | 0,237 |
| Լիովին համաձայն եմ | 18 (5,28) | 9 (6,47) | 9 (4,46) | |
| Համաձայն եմ | 236 (69,21) | 98 (70,50) | 138 (68,32) | |
| Համաձայն չեմ | 82 (24,05) | 32 (23,02) | 50 (24,75) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 5 (1,47) | 0 (0,00) | 5 (2,48) | |
| Հայաստանում առողջապահական համակարգն ունի բոլոր անհրաժեշտ կարողությունները՝ Քովիդ-19 համաճարակային իրավիճակը վերահսկելու համար, N (%) | | | | 0,752 |
| Լիովին համաձայն եմ | 17 (5,12) | 7 (5,22) | 10 (5,05) | |
| Համաձայն եմ | 269 (81,02) | 111 (82,84) | 158 (79,80) | |
| Համաձայն չեմ | 45 (13,55) | 16 (11,94) | 29 (14,65) | |

| | | | | |
|---|-------------|-------------|-------------|-------|
| Բոլորովին համաձայն չեմ | 1 (0,30) | 0 (0,00) | 1 (0,51) | |
| ՀՀ կառավարության կողմից իրականացվող միջոցառումները բավարար են Քովիդ-19 համաճարակային իրավիճակը վերահսկելու համար, N (%) | | | | 0,550 |
| Լիովին համաձայն եմ | 12 (3,65) | 6 (4,65) | 6 (3,00) | |
| Համաձայն եմ | 264 (80,24) | 104 (80,62) | 160 (80,00) | |
| Համաձայն չեմ | 50 (15,20) | 17 (13,18) | 33 (16,50) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 3 (0,91) | 2 (1,55) | 1 (0,50) | |

| Աղյուսակ 4. Քովիդ-19-ի վերահսկման և դեպքերի վարման գործելակերպը | | | | |
|---|---------------------|-----------------------|-----------------------|----------------|
| <i>ներկայացված է ընդհանուր և ըստ առաջին ընտրության հակաբիոտիկների նշանակման գործելակերպին հետևողական և ոչ հետևողական բժիշկների խմբերի</i> | | | | |
| Փոփոխականներ | Ընդհանուր | Հետևողական | Ոչ հետևողական | |
| | N=355 (100%) | N=144 (40.56%) | N=211 (59.44%) | p-value |
| Նշվածներից ինչո՞վ կամ ինչերո՞վ եք առաջնորդվում Քովիդ-19 պացիենտների բուժման ժամանակ որոշումներ կայացնելիս, N (%) | | | | |
| Հայաստանի ազգային ուղեցույցներ/ ընթացակարգեր | 323 (90,99) | 131 (90,97) | 192 (91,00) | 0,994 |
| ԱՀԿ ուղեցույցներ | 175 (49,30) | 75 (52,08) | 100 (47,39) | 0,385 |
| ԱՄՆ-ի Առողջապահության ազգային ինստիտուտի / Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի ուղեցույցներ | 95 (26,76) | 34 (23,61) | 61 (28,91) | 0,268 |

| | | | | |
|---|-------------|-------------|-------------|--------------|
| Ընթացակարգեր / ուղեցույցներ, որոնք մշակվել են ձեր պոլիկլինիկայի կողմից | 98 (27,61) | 34 (23,61) | 64 (30,33) | 0,164 |
| Ձեր սեփական կլինիկական փորձը | 256 (72,11) | 97 (67,36) | 159 (75,36) | 0,099 |
| Այլ | 17 (4,79) | 8 (5,56) | 9 (4,27) | 0,576 |
| Նշվածներից որոնք եք սովորաբար նշանակում Քովիդ-19 թեթև/մեղմ արտահայտված ախտանշաններով հիվանդներին տնային խնամքի ժամանակ, N (%) | | | | |
| Ջերմիջեցնողներ | 317 (89,30) | 135 (93,75) | 182 (86,26) | 0,025 |
| Հակավիրուսային դեղամիջոցներ | 137 (38,59) | 46 (31,94) | 91 (43,13) | 0,034 |
| Վիտամին C | 288 (81,13) | 111 (77,08) | 177 (83,89) | 0,108 |
| Վիտամին D | 285 (80,28) | 111 (77,08) | 174 (82,46) | 0,211 |
| Zn (ցինկ) | 171 (48,17) | 57 (39,58) | 114 (54,03) | 0,007 |
| Հակամակարոդիչներ | 149 (41,97) | 47 (32,64) | 102 (48,34) | 0,003 |
| Կորտիկոստերոիդներ | 16 (4,51) | 3 (2,08) | 13 (6,16) | 0,069 |
| Հակաբիոտիկներ | 23 (6,48) | 7 (4,86) | 16 (7,58) | 0,306 |
| Այլ | 44 (12,39) | 17 (11,81) | 27 (12,80) | 0,781 |
| Նշված Քովիդ-19-ի ո՞ր դեպքերին եք սովորաբար խորհուրդ տալիս հոսպիտալացնել, N (%) | | | | |
| Քովիդ-19 հաստատված, ախտանշաններ ունեցող հղի պացիենտներին | 270 (76,06) | 112 (77,78) | 158 (74,88) | 0,530 |
| Քովիդ-19 կասկածելի պացիենտներին, ովքեր վերջին երեք օրվա ընթացքում ունեցել են 38.5°C-ից բարձր ջերմություն, և/կամ արյան թթվածնով հագեցվածությունը (SpO2) եղել է ցածր կամ հավասար 93%-ի, և/կամ շնչառության | 193 (54,37) | 84 (58,33) | 109 (51,66) | 0,215 |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|-------|
| հաճախականությունը մեծ է եղել 22 շնչ. շարժում/րոպեում ցուցանիշից | | | | |
| 60 տարեկանից բարձր Քովիդ-19 հաստատված պացիենտներին, ովքեր ունեն թոքաբորբ առանց հիպօքսիայի | 168 (47,32) | 77 (53,47) | 91 (43,13) | 0,055 |
| Քովիդ-19 հաստատված ճարպակալում ունեցող պացիենտներին, ովքեր ունեն թոքաբորբ առանց հիպօքսիայի | 211 (59,44) | 94 (65,28) | 117 (55,45) | 0,064 |
| Քովիդ-19 հաստատված պացիենտներին, ովքեր վերջին երեք օրվա ընթացքում ունեցել են 38.5°C-ից բարձր ջերմություն և/կամ արյան թթվածնով հագեցվածությունը (SpO2) եղել է ցածր կամ հավասար 93%-ի, և/կամ շնչառության հաճախականությունը մեծ կամ հավասար է եղել 30 շնչ. շարժում/րոպեում ցուցանիշից | 269 (75,77) | 109 (75,69) | 160 (75,83) | 0,977 |
| Այլ | 41 (11,55) | 20 (13,89) | 21 (9,95) | 0,255 |
| Պացիենտի հոսպիտալացման ցուցումները որոշելու համար դուք օգտագործում եք CRB-65 սանդղակը, N (%) | | | | 0,726 |
| Այո | 156 (44,44) | 66 (46,15) | 90 (43,27) | |
| Ոչ | 76 (21,65) | 32 (22,38) | 44 (21,15) | |
| Ես տեղյակ չեմ այդ սանդղակի մասին | 119 (33,90) | 45 (31,47) | 74 (35,58) | |
| Սովորաբար ինչպե՞ս եք իրականացնում ձեր Քովիդ-19 պացիենտների վիճակի վերահսկողությունը, N (%) | | | | |
| Հեռախոսազանգով | 345 (97,18) | 142 (98,61) | 203 (96,21) | 0,179 |
| Տնային այցերի միջոցով | 271 (76,34) | 117 (81,25) | 154 (72,99) | 0,072 |
| SMS հաղորդագրությունով | 75 (21,13) | 34 (23,61) | 41 (19,43) | 0,343 |

| | | | | |
|--|--------------|--------------|--------------|--------------|
| Տեսագանգի միջոցով | 111 (31,27) | 47 (32,64) | 64 (30,33) | 0,645 |
| Այլ | 23 (6,48) | 8 (5,56) | 15 (7,11) | 0,559 |
| Ես չեմ իրականացնում վիճակի վերահսկողությունը | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | - |
| Որքա՞ն երկար եք սովորաբար իրականացնում Քովիդ-19 թեթև ընթացքով պացիենտների վիճակի օրական վերահսկողությունը, N (%) | | | | 0,784 |
| Ես իրականացնում եմ վիճակի օրական վերահսկողությունը | 351 (99,43) | 142 (99,30) | 209 (99,52) | |
| Օրերի քանակը, M (SD) | 13,57 (1,80) | 13,69 (1,66) | 13,49 (1,89) | 0,301 |
| Ես չեմ իրականացնում վիճակի օրական վերահսկողությունը | 2 (0,57) | 1 (0,70) | 1 (0,48) | |
| Որքա՞ն երկար եք իրականացնում Քովիդ-19 անախտանիշ պացիենտների վիճակի օրական վերահսկողությունը, N (%) | | | | 0,977 |
| Ես իրականացնում եմ վիճակի օրական վերահսկողությունը | 347 (98,58) | 141 (98,60) | 206 (98,56) | |
| Օրերի քանակը, M (SD) | 13,07 (2,46) | 13,25 (2,18) | 12,95 (2,63) | 0,267 |
| Ես չեմ իրականացնում վիճակի օրական վերահսկողությունը | 5 (1,42) | 2 (1,40) | 3 (1,44) | |
| Սովորաբար ո՞ր դեպքերում եք ձեր Քովիդ-19 պացիենտներին նշանակում հակաբիոտիկներ, N (%) | | | | |
| Թոքաբորբի կանխարգելման նպատակով | 30 (8,45) | 11 (7,64) | 19 (9,00) | 0,650 |
| Քովիդ-19 բոլոր հաստատված դեպքերի վարման ժամանակ | 8 (2,25) | 0 (0,00) | 8 (3,79) | 0,018 |
| Բակտերիալ թոքաբորբի կասկածի դեպքում | 268 (75,49) | 119 (82,64) | 149 (70,62) | 0,010 |

| | | | | |
|---|-------------|-------------|-------------|--------------|
| Ռադիոլոգիական հետազոտությամբ հաստատված ցանկացած տեսակի թոքաբորբի բուժման ժամանակ | 169 (47,61) | 57 (39,58) | 112 (53,08) | 0,012 |
| Այլ | 45 (12,68) | 19 (13,19) | 26 (12,32) | 0,808 |
| Առանց բարդությունների թոքաբորբ ունեցող Քովիդ-19 պացիենտներին միջինը քանի՞ օր էք նշանակում էմպիրիկ հակաբիոտիկներ, M (SD) | | | | |
| Նվազագույն օրերի քանակը | 5,26 (1,20) | 5,34 (1,16) | 5,21 (1,23) | 0,324 |
| Առավելագույն օրերի քանակը | 8,47 (2,49) | 8,69 (2,59) | 8,31 (2,42) | 0,191 |
| Խնդրում եմ թվել ձեր պրակտիկայում Քովիդ-19 պացիենտների բուժման համար ամենահաճախ նշանակվող հակաբիոտիկը, N (%) | | | | |
| Ամոքսիցիլին | 144 (40,56) | - | - | - |
| Ազիթրոմիցին | 107 (30,14) | - | - | - |
| Ցեֆտրիաքսոն | 58 (16,34) | - | - | - |
| Դոքսիցիլին | 3 (0,85) | - | - | - |
| Լևոֆլոքսացին | 29 (8,17) | - | - | - |
| Մոքսիֆլոքսացին | 9 (2,54) | | | |
| Կլարիթրոմիցին | 1 (0,28) | - | - | - |
| Նշված ո՞ր դեպքերում էք ձեր Քովիդ-19 պացիենտներին սովորաբար նշանակում համակցված հակաբիոտիկային բուժում, N (%) | | | | |
| Բոլոր Քովիդ-19 պացիենտներին | 2 (0,56) | 2 (1,39) | 0 (0,00) | 0,087 |
| Ուղեկցող հիվանդություններ ունեցող մեծահասակներին | 86 (24,29) | 38 (26,39) | 48 (22,86) | 0,447 |
| Նախկինում վերին շնչուղիներից S.aures կամ P.aeruginosa անջատում, կամ վերջին 90 օրվա | 67 (18,93) | 31 (21,53) | 36 (17,14) | 0,301 |

| | | | | |
|--|-------------|------------|------------|------------------|
| ընթացքում հոսալիտալացված և հակաբիոտիկներ ստացած պացիենտներին | | | | |
| Բոլոր թոքաբորբ ունեցող Քովիդ-19 պացիենտներին | 38 (10,73) | 16 (11,11) | 22 (10,48) | 0,850 |
| Ծանր և/կամ բակտերիալ թոքաբորբ ունեցող Քովիդ-19 պացիենտներին | 33 (9,30) | 12 (8,33) | 21 (9,95) | 0,606 |
| Քովիդ-19-ի ծանրության աստիճանից կախված | 28 (7,89) | 10 (6,94) | 18 (8,53) | 0,586 |
| Ոչ ոքի | 153 (43,22) | 61 (42,36) | 92 (43,81) | 0,787 |
| Այլ | 8 (2,26) | 4 (2,78) | 4 (1,90) | 0,587 |
| Խնդրում եմ թվել ձեր պրակտիկայում Քովիդ-19 պացիենտների համար ամենահաճախ նշանակվող համակցված հակաբիոտիկային բուժումը, N (%) ¹ | | | | |
| Կլարիթրոմիցին+ Դոքսիցիկլին | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | - |
| Ամոքսիցիլին/Կլավուլոնաթթու+Դոքսիցիկլին | 3 (0,85) | 2 (1,39) | 1 (0,47) | 0,579 |
| Դոքսիցիկլին+Ազիթրոմիցին | 4 (1,13) | 3 (2,08) | 1 (0,47) | 0,338 |
| Ազիթրոմիցին+Ցեֆտրիաքսոն | 43 (12,11) | 8 (5,56) | 35 (16,59) | 0,007 |
| Ամոքսիցիլին/Կլավուլոնաթթու +Ազիթրոմիցին | 50 (14,08) | 32 (22,22) | 18 (8,53) | <0,001 |
| Մոքսիֆլոքսացին +Ազիթրոմիցին | 6 (1,69) | 1 (0,69) | 5 (2,37) | 0,451 |
| Ամոքսիցիլին/Կլավուլոնաթթու+ Լևոֆլոքսացին | 20 (5,63) | 14 (9,72) | 6 (2,84) | 0,022 |
| Ներքոնշյալ գործոնների կարևորությունը Քովիդ-19 պացիենտներին էմպիրիկ հակաբիոտիկներ նշանակելու որոշման համար, N (%) | | | | |
| Հիվանդության ծանրությունը (կլինիկական պատկերը) | | | | 0,934 |
| 1 Քիչ կարևոր է | 14 (4,09) | 7 (5,00) | 7 (3,47) | |
| 2 | 9 (2,63) | 4 (2,86) | 5 (2,48) | |
| 3 | 39 (11,40) | 17 (12,14) | 22 (10,89) | |

| | | | | |
|---|-------------|------------|-------------|-------|
| 4 | 55 (16,08) | 21 (15,00) | 34 (16,83) | |
| 5 Շատ կարևոր է | 225 (65,79) | 91 (65,00) | 134 (66,34) | |
| Լաբորատոր մարկերները | | | | 0,193 |
| 1 Քիչ կարևոր է | 12 (3,48) | 5 (3,55) | 7 (3,43) | |
| 2 | 16 (4,64) | 7 (4,96) | 9 (4,41) | |
| 3 | 44 (12,75) | 10 (7,09) | 34 (16,67) | |
| 4 | 80 (23,19) | 36 (25,53) | 44 (21,57) | |
| 5 Շատ կարևոր է | 154 (44,64) | 68 (48,23) | 86 (42,16) | |
| N/A ² | 39 (11,30) | 15 (10,64) | 24 (11,76) | |
| Ռադիոլոգիական պատկերը | | | | 0,820 |
| 1 Քիչ կարևոր է | 7 (2,02) | 3 (2,13) | 4 (1,94) | |
| 2 | 8 (2,31) | 2 (1,42) | 6 (2,91) | |
| 3 | 39 (11,24) | 17 (12,06) | 22 (10,68) | |
| 4 | 60 (17,29) | 21 (14,89) | 39 (18,93) | |
| 5 Շատ կարևոր է | 205 (59,08) | 85 (60,28) | 120 (58,25) | |
| N/A ² | 28 (8,07) | 13 (9,22) | 15 (7,28) | |
| Ներքոնշյալ լաբորատոր թեստերի կարևորությունը Քովիդ-19 պացիենտներին էմպիրիկ հակաբիոտիկներ նշանակելու որոշման համար, N (%) | | | | |
| C- ռեակտիվ սպիտակուց | | | | 0,554 |
| 1 Քիչ կարևոր է | 15 (4,34) | 5 (3,50) | 10 (4,93) | |
| 2 | 24 (6,94) | 6 (4,20) | 18 (8,87) | |
| 3 | 50 (14,45) | 21 (14,69) | 29 (14,29) | |
| 4 | 42 (12,14) | 18 (12,59) | 24 (11,82) | |
| 5 Շատ կարևոր է | 167 (48,27) | 70 (48,95) | 97 (47,78) | |
| N/A ² | 48 (13,87) | 23 (16,08) | 25 (12,32) | |
| Պրոկալցիտոնին | | | | 0,234 |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|-------|
| 1 Քիչ կարևոր է | 43 (13,35) | 13 (9,70) | 30 (15,96) | |
| 2 | 34 (10,56) | 13 (9,70) | 21 (11,17) | |
| 3 | 38 (11,80) | 12 (8,96) | 26 (13,83) | |
| 4 | 36 (11,18) | 19 (14,18) | 17 (9,04) | |
| 5 Շատ կարևոր է | 84 (26,09) | 39 (29,10) | 45 (23,94) | |
| N/A ² | 87 (27,02) | 38 (28,36) | 49 (26,06) | |
| Լիմֆոցիտների քանակ | | | | 0,377 |
| 1 Քիչ կարևոր է | 13 (3,78) | 5 (3,52) | 8 (3,96) | |
| 2 | 19 (5,52) | 5 (3,52) | 14 (6,93) | |
| 3 | 52 (15,12) | 17 (11,97) | 35 (17,33) | |
| 4 | 69 (20,06) | 27 (19,01) | 42 (20,79) | |
| 5 Շատ կարևոր է | 135 (39,24) | 62 (43,66) | 73 (36,14) | |
| N/A ² | 56 (16,28) | 26 (18,31) | 30 (14,85) | |
| Նեյտրոֆիլների քանակ | | | | 0,641 |
| 1 Քիչ կարևոր է | 12 (3,49) | 4 (2,82) | 8 (3,96) | |
| 2 | 19 (5,52) | 5 (3,52) | 14 (6,93) | |
| 3 | 50 (14,53) | 19 (13,38) | 31 (15,35) | |
| 4 | 64 (18,60) | 29 (20,42) | 35 (17,33) | |
| 5 Շատ կարևոր է | 141 (40,99) | 58 (40,85) | 83 (41,09) | |
| N/A ² | 58 (16,86) | 27 (19,01) | 31 (15,35) | |
| Արդյո՞ք ձեր պոլիկլինիկան/հաստատությունը մշակել է Քովիդ-19 պացիենտների հակաբիոտիկներով բուժման համար նախատեսված տեղական ուղեցույցներ/ ընթացակարգեր, N (%) | | | | 0,780 |
| Այո | 93 (26,27) | 35 (24,31) | 58 (27,62) | |
| Ոչ | 251 (70,90) | 105 (72,92) | 146 (69,52) | |
| Չգիտեմ | 10 (2,82) | 4 (2,78) | 6 (2,86) | |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|--------------|
| Դուք Քովիդ-19 պացիենտներին արտահիվանդանոցային բուժման ընթացքում կորտիկոստերոիդներ նշանակում եք, N (%) | | | | 0,025 |
| Այո | 215 (60,91) | 77 (53,85) | 138 (65,71) | |
| Ոչ | 138 (39,09) | 66 (46,15) | 72 (34,29) | |
| Դուք Քովիդ-19 պացիենտներին արտահիվանդանոցային բուժման ընթացքում հակամակարդիչներ նշանակում եք, N (%) | | | | 0,034 |
| Այո | 318 (89,58) | 123 (85,42) | 195 (92,42) | |
| Ոչ | 37 (10,42) | 21 (14,58) | 16 (7,58) | |
| 1- n=355 հարցվողների շրջանում 2- Այդ թեստերը կա՛մ անհասանելի են, կա՛մ չեն օգտագործվում այս նպատակով | | | | |

| | | | | |
|---|---------------------|-----------------------|-----------------------|----------------|
| Աղյուսակ 5. Քովիդ-19 վարակի կանխարգելման և վերահսկման գործելակերպը | | | | |
| <i>ներկայացված ընդհանուր և ըստ առաջին ընտրության հակաբիոտիկների նշանակման գործելակերպին հետևողական և ոչ հետևողական բժիշկների խմբերի</i> | | | | |
| Փոփոխականներ | Ընդհանուր | Հետևողական | Ոչ հետևողական | p-value |
| | N=355 (100%) | N=144 (40,56%) | N=211 (59,44%) | |
| Քովիդ-19 պացիենտի հետ շփվելիս՝ ես օգտագործում եմ հետևյալ անհատական պաշտպանիչ միջոցները՝ | | | | |
| Մեկանգամյա օգտագործման խալաթ, N (%) | | | | 0,042 |
| Երբեք | 16 (4,52) | 2 (1,39) | 14 (6,67) | |
| Հաճախ | 131 (37,01) | 51 (35,42) | 80 (38,10) | |
| Միշտ | 207 (58,47) | 91 (63,19) | 116 (55,24) | |
| Վիրաբուժական դիմակ, N (%) | | | | 0,304 |

| | | | | |
|---|-------------|-------------|-------------|--------------|
| Երբեք | 2 (0,56) | 0 (0,00) | 2 (0,95) | |
| Հաճախ | 15 (4,24) | 8 (5,56) | 7 (3,33) | |
| Միշտ | 337 (95,20) | 136 (94,44) | 201 (95,71) | |
| Ձեռնոցներ, N (%) | | | | 0,283 |
| Երբեք | 35 (9,89) | 11 (7,64) | 24 (11,43) | |
| Հաճախ | 131 (37,01) | 50 (34,72) | 81 (38,57) | |
| Միշտ | 188 (53,11) | 83 (57,64) | 105 (50,00) | |
| Պաշտպանիչ ակնոցներ/ դեմքի վահան, N (%) | | | | <i>0,036</i> |
| Երբեք | 24 (6,78) | 6 (4,17) | 18 (8,57) | |
| Հաճախ | 126 (35,59) | 44 (30,56) | 82 (39,05) | |
| Միշտ | 204 (57,63) | 94 (65,28) | 110 (52,38) | |
| Քովիդ-19 պացիենտի հետ շփվելիս՝ ես օգտագործում եմ հետևյալ միջոցառումները | | | | 0,508 |
| Իմ պացիենտի հիվանդության կլինիկական պատկերը և հիվանդության պատմությունը ազդում են անհատական պաշտպանիչ միջոցներ ընտրելու իմ որոշման վրա, N (%) | | | | |
| Երբեք | 205 (58,07) | 82 (57,75) | 123 (58,29) | |
| Հաճախ | 50 (14,16) | 17 (11,97) | 33 (15,64) | |
| Միշտ | 98 (27,76) | 43 (30,28) | 55 (26,07) | |
| Ես հետևում եմ ձեռքերի հիգիենային Քովիդ-19 հիվանդներին զննելուց առաջ և հետո, N (%) | | | | 0,380 |
| Երբեք | 4 (1,13) | 2 (1,39) | 2 (0,95) | |
| Հաճախ | 10 (2,82) | 2 (1,39) | 8 (3,79) | |
| Միշտ | 341 (96,06) | 140 (97,22) | 201 (95,26) | |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|-------|
| Պացիենտների հետ շփվելիս, ես ամենաքիչը 1 մ հեռավորություն եմ պահպանում՝ երբ հնարավոր է, N (%) | | | | 0,632 |
| Երբեք | 12 (3,39) | 4 (2,80) | 8 (3,79) | |
| Հաճախ | 79 (22,32) | 29 (20,28) | 50 (23,70) | |
| Միշտ | 263 (74,29) | 110 (76,92) | 153 (72,51) | |
| Այլ բուժաշխատողների հետ շփվելիս, ես ամենաքիչը 1 մ հեռավորություն եմ պահպանում՝ երբ հնարավոր է, N (%) | | | | 0,344 |
| Երբեք | 15 (4,24) | 4 (2,80) | 11 (5,21) | |
| Հաճախ | 72 (20,34) | 26 (18,18) | 46 (21,80) | |
| Միշտ | 267 (75,42) | 113 (79,02) | 154 (72,99) | |

| | | | | |
|--|---------------------|-----------------------|-----------------------|----------------|
| Աղյուսակ 6. Պատվաստան կարգավիճակը, վերաբերմունքը և պատրաստակամությունը ներկայացված ընդհանուր և ըստ առաջին ընտրության հակաբիոտիկների նշանակման գործելակերպին հետևողական և ոչ հետևողական բժիշկների խմբերի | | | | |
| Փոփոխականներ | Ընդհանուր | Հետևողական | Ոչ հետևողական | p-value |
| | N=355 (100%) | N=144 (40,56%) | N=211 (59,44%) | |
| Ձեր կարծիքով, հնարավոր է, որ առաջիկա մեկ տարվա ընթացքում վարակվեք Քովիդ-19-ով, N (%) | | | | 0,891 |
| Այո | 136 (42,24) | 56 (41,79) | 80 (42,55) | |
| Ոչ | 186 (57,76) | 78 (58,21) | 108 (57,45) | |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|--------------|
| Ինչու՞ եք կարծում, որ չեք վարակվի Քովիդ-19-ով առաջիկա մեկ տարվա ընթացքում, N (%) | | | | 0,046 |
| Ես կարծում եմ, որ հիվանդացել եմ և արդեն իմունիտետ ունեմ (առանց ՊՇՌ թեստավորման) | 8 (4,37) | 3 (3,90) | 5 (4,72) | |
| Ես արդեն լավացել եմ և կրկին չեմ հիվանդանա (ախտորոշումը հաստատվել է ՊՇՌ թեստով) | 54 (29,51) | 16 (20,78) | 38 (35,85) | |
| Ես պատվաստվել եմ Քովիդ-19 –ի դեմ | 105 (57,38) | 52 (67,53) | 53 (50,00) | |
| Ես չեմ ունեցել որևէ կլինիկական ախտանշաններ, բայց ունեմ հակամարմիններ Քովիդ-19-ի դեմ | 5 (2,73) | 3 (3,90) | 2 (1,89) | |
| Այլ | 11 (6,01) | 3 (3,90) | 8 (7,55) | |
| Ձեր կարծիքով, որքա՞ն ծանր կընթանա հիվանդությունը ձեր մոտ, եթե վարակվեք Քովիդ-19-ով, N (%) | | | | 0,021 |
| Ես կունենամ թեթև ախտանշաններ, որը, հավանաբար, չի պահանջի հոսպիտալացում | 53 (58,24) | 29 (70,73) | 24 (48,00) | |
| Ես կունենամ միջին ծանրության ախտանշաններ, որը, հավանաբար, կպահանջի հոսպիտալացում | 21 (23,08) | 4 (9,76) | 17 (34,00) | |
| Ես կունենամ ծանր ընթացքով վարակ, որը, հավանաբար, կպահանջի տեղափոխում ինտենսիվ թերապիայի բաժանմունք | 17 (18,68) | 8 (19,51) | 9 (18,00) | |
| Դուք պատվաստվե՞լ եք Քովիդ-19-ի դեմ, N (%) | | | | 0,003 |
| Այո | 232 (65,35) | 107 (74,31) | 125 (59,24) | |
| Քովիդ-19-ի դեմ պատվաստանյութի քանի՞ դեղաչափ եք ստացել, N (%) | | | | 0,237 |
| 1 դեղաչափ | 86 (37,07) | 44 (41,12) | 42 (33,60) | |
| 2 դեղաչափ | 146 (62,93) | 63 (58,88) | 83 (66,40) | |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|-------|
| Խնդրում եմ, նշեք COVID-19-ի դեմ ստացած պատվաստանյութի առաջին դեղաչափի ապրանքանիշի անվանումը, N (%) | | | | 0,606 |
| AstraZeneca | 105 (46,46) | 47 (46,53) | 58 (46,40) | |
| Sputnik V | 76 (33,63) | 35 (34,65) | 41 (32,80) | |
| Coronavac | 39 (17,26) | 15 (14,85) | 24 (19,20) | |
| Sinopharm | 6 (2,65) | 4 (3,96) | 2 (1,60) | |
| Վերջին երկու տարիների ընթացքում դուք պատվաստվե՞լ եք գրիպի դեմ, N (%) | | | | 0,086 |
| Այո | 262 (73,80) | 115 (79,86) | 147 (69,67) | |
| Ոչ | 91 (25,63) | 28 (19,44) | 63 (29,86) | |
| Չեմ հիշում | 2 (0,56) | 1 (0,69) | 1 (0,47) | |
| Քովիդ-19 պատվաստանյութերի նկատմամբ վերաբերմունքը | | | | |
| Ընդհանուր առմամբ, ես պատվաստումներին դեմ եմ: N (%) | | | | 0,890 |
| Լիովին համաձայն եմ | 4 (1,14) | 2 (1,41) | 2 (0,95) | |
| Համաձայն եմ | 22 (6,25) | 8 (5,63) | 14 (6,67) | |
| Համաձայն չեմ | 257 (73,01) | 102 (71,83) | 155 (73,81) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 69 (19,60) | 30 (21,13) | 39 (18,57) | |
| Քովիդ-19-ի դեմ պատվաստումը կարող է զգալիորեն նվազեցնել համաճարակի տարածումը: N (%) | | | | 0,747 |
| Լիովին համաձայն եմ | 60 (17,24) | 27 (19,29) | 33 (15,87) | |
| Համաձայն եմ | 275 (79,02) | 107 (76,43) | 168 (80,77) | |
| Համաձայն չեմ | 10 (2,87) | 5 (3,57) | 5 (2,40) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 3 (0,86) | 1 (0,71) | 2 (0,96) | |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|-------|
| Քովիդ-19-ի դեմ պատվաստումը հիվանդության բարդությունները (օրինակ՝ հոսպիտալացման անհրաժեշտությունը, թոքաբորբը) կանխարգելելու ամենալավ ճանապարհն է: N (%) | | | | 0,185 |
| Լիովին համաձայն եմ | 42 (11,97) | 20 (14,08) | 22 (10,53) | |
| Համաձայն եմ | 291 (82,91) | 118 (83,10) | 173 (82,78) | |
| Համաձայն չեմ | 18 (5,13) | 4 (2,82) | 14 (6,70) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Քովիդ-19-ի դեմ պատվաստումը պետք է պարտադիր լինի բոլոր մարդկանց համար, եթե չկան հակացուցումներ: N (%) | | | | 0,412 |
| Լիովին համաձայն եմ | 20 (5,70) | 10 (7,04) | 10 (4,78) | |
| Համաձայն եմ | 249 (70,94) | 102 (71,83) | 147 (70,33) | |
| Համաձայն չեմ | 75 (21,37) | 29 (20,42) | 46 (22,01) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 7 (1,99) | 1 (0,70) | 6 (2,87) | |
| Քովիդ-19-ի դեմ պատվաստումը պետք է պարտադիր լինի բոլոր բուժաշխատողների համար, եթե չկան հակացուցումներ: N (%) | | | | 0,334 |
| Լիովին համաձայն եմ | 38 (10,76) | 14 (9,79) | 24 (11,43) | |
| Համաձայն եմ | 245 (69,41) | 106 (74,13) | 139 (66,19) | |
| Համաձայն չեմ | 64 (18,13) | 22 (15,38) | 42 (20,00) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 6 (1,70) | 1 (0,70) | 5 (2,38) | |
| Քովիդ-19-ի դեմ պատվաստանյութը թողարկվեց արագ՝ առանց համապատասխան փորձարկումների: N (%) | | | | 0,058 |
| Լիովին համաձայն եմ | 12 (3,75) | 3 (2,36) | 9 (4,66) | |
| Համաձայն եմ | 160 (50,00) | 54 (42,52) | 106 (54,92) | |
| Համաձայն չեմ | 145 (45,31) | 68 (53,54) | 77 (39,90) | |

| | | | | |
|--|-------------|-------------|-------------|-------|
| Բոլորովին համաձայն չեմ | 3 (0,94) | 2 (1,57) | 1 (0,52) | |
| Վարակիչ հիվանդությունների դեմ իմունիտետը ցանկալի է ձեռք բերել բնական ճանապարհով (վարակվելով), քան պատվաստվելով: N (%) | | | | 0,259 |
| Լիովին համաձայն եմ | 15 (4,48) | 6 (4,44) | 9 (4,50) | |
| Համաձայն եմ | 75 (22,39) | 23 (17,04) | 52 (26,00) | |
| Համաձայն չեմ | 233 (69,55) | 100 (74,07) | 133 (66,50) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 12 (3,58) | 6 (4,44) | 6 (3,00) | |
| Արտակարգ իրավիճակում և համաճարակի պայմաններում ստեղծված պատվաստնայութի անվանգությունը չի կարող երաշխավորված լինել: N (%) | | | | 0,197 |
| Լիովին համաձայն եմ | 5 (1,71) | 3 (2,46) | 2 (1,17) | |
| Համաձայն եմ | 118 (40,27) | 41 (33,61) | 77 (45,03) | |
| Համաձայն չեմ | 165 (56,31) | 75 (61,48) | 90 (52,63) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 5 (1,71) | 3 (2,46) | 2 (1,17) | |
| Ես վստահում եմ գիտությանը՝ նոր և անվտանգ պատվաստանյութեր ստեղծելու հարցում: N (%) | | | | 0,126 |
| Լիովին համաձայն եմ | 28 (8,24) | 8 (5,88) | 20 (9,80) | |
| Համաձայն եմ | 301 (88,53) | 126 (92,65) | 175 (85,78) | |
| Համաձայն չեմ | 11 (3,24) | 2 (1,47) | 9 (4,41) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 0 (0,00) | 0 (0,00) | 0 (0,00) | |
| Ես վստահում եմ գիտությանը՝ նոր և արդյունավետ պատվաստանյութ ստեղծելու հարցում: N (%) | | | | 0,262 |
| Լիովին համաձայն եմ | 26 (7,78) | 9 (6,62) | 17 (8,59) | |
| Համաձայն եմ | 300 (89,82) | 125 (91,91) | 175 (88,38) | |
| Համաձայն չեմ | 7 (2,10) | 1 (0,74) | 6 (3,03) | |

| | | | | |
|---|-------------|-------------|-------------|-------|
| Բոլորովին համաձայն չեմ | 1 (0,30) | 1 (0,74) | 0 (0,00) | |
| Ես վստահում եմ Առողջապահության նախարարությանը՝ Հայաստանի բնակչությանը անվտանգ պատվաստանյութերով ապահովելու հարցում: N (%) | | | | 0,054 |
| Լիովին համաձայն եմ | 28 (8,64) | 13 (10,00) | 15 (7,73) | |
| Համաձայն եմ | 281 (86,73) | 116 (89,23) | 165 (85,05) | |
| Համաձայն չեմ | 13 (4,01) | 1 (0,77) | 12 (6,19) | |
| Բոլորովին համաձայն չեմ | 2 (0,62) | 0 (0,00) | 2 (1,03) | |
| Խորհուրդ կտա ք ձեր պացիենտներին պատվաստվել Բովիդ-19-ի դեմ: N (%) | | | | 0,790 |
| Այո | 346 (98,02) | 141 (98,60) | 205 (97,62) | |
| Ոչ | 3 (0,85) | 1 (0,70) | 2 (0,95) | |
| Վստահ չեմ | 4 (1,13) | 1 (0,70) | 3 (1,43) | |